

վուրդը: Այս ծիրին մէջ կարելի է յիշել 19-րդ դարու ջարդերը, որ նախապատկեր մը կը ներկայացնէր գալիք մեծ աղետին:

19-րդ դարուն, Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող հայ ժողովուրդը Սան Սթեֆանոյի դաշնագիրին 16-րդ յօդուածով ստացած էր խոստում մը: Այս յօդուածով Օսմանեան կառավարութիւնը կը խոստանար որոշ բարեկարգումներ կատարել Արեւմտեան Հայաստանի մէջ: Այս նպատակով էր որ 1878-ին, հայկական պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Խրիմեան հայրիկի, մեկնեցաւ Գերմանիա, մասնակցելու Պերլինի Վեհաժողովին: Այս ժողովէն, հայ պատուիրակութիւնը վերադարձաւ յուսահատ, երբ մանաւանդ 16-րդ յօդուածը շրջուեցաւ 61-րդ յօդուածին: Հայերը գացած էին իրենց իրաւունքները պահանջելու, սակայն վստահած էին մեծ ազգերու խոստումներուն: Խրիմեան Հայրիկ անդրադառնալով այս իրականութեան, կը գրէ.

«Յայնժամ դարձուցի երես եւ իբր թէ կը փնտռէի իմ զէյթունցի, սասունցի, շատախցի քաջերս, բայց քաջերը, պէտք չէ՞ր անոնցմէ մէկ երկու հոգի ալ իմ քովս գտնուէին, որ անոնց արիւնոտ սուրերը վեհաժողովի քաղաքագետներու ցուցնելով կոչէի՝ տեսէ՛ք, ահա իմ երկաթեայ շերտփները, հոս են, պատրաստ»:

Խրիմեան Հայրիկ, ժողովուրդի մը գոյատեւման ի խընդիր կը շեշտէ պայքարի կարեւորութիւնը: Երբ հզօրներու դիմաց կը գտնուիս, պայքարն է որ կրնայ իրաւունքդ պահել, եւ այս պայքարը զանազան մարզեր կրնայ ընդգրկել, ինչպէս՝ զինուորական, մշակութային, հոգեւոր եւ ազգային: Այս բոլորը ամբողջութիւն են, եւ զիրար կը լրացնեն:

Պերլինի Վեհաժողովէն տարիներ անցան սակայն օսմանցի թուրքեր միշտ նոյն նպատակը հետապնդեցին, սպասելով զայն գործադրել յարմար առիթին: Առիթը Համաշխարհային Ա. Պատերազմն էր, որու ընթացքին Թուրքիա դաշնակից դարձաւ Գերմանիոյ:



April 24

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՃ՝ ՌԻՅԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻԵՊԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՂԵՃ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ

1915

2018



103 ՏԱՐԻՆԵՐՈՒ
ԿՏԱԿ ՄԸ

Հայ ժողովուրդի դեմ գործադրուած ցեղասպանութիւնը հայ ժողովուրդի պատմութեան ամենն տխուր էջն է: Ցեղասպանութեան տարիներուն Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութիւնը ենթարկուեցաւ արմատապէս բնաջինջ ըլլալու ծրագիրին՝ կազմակերպուած եւ գործադրուած թիրք պետութեան կողմէ: Այս ցեղասպանութիւնը ուներ իր ենթահողը: Չայն ծրագրողները կը վայելէին «թուրանիզմի» հովանաւորութիւնը: Թուրանիզմը կը ջանար հիմնել Մեծն Թուրքիա եւ միակ արգելքը այդ երազին կը հանդիսանար հայ ժող-

ԼԱՒ ՀԱՅՐ

- Ինչո՞ւ հայկական դպրոցները փակ էին Ապրիլի 24-ին:

- Ինչո՞ւ Ապրիլի 24-ին հայեր փակեցին իրենց խանութները, արհեստանոցներն ու վաճառատուները:

- Ինչո՞ւ Ապրիլի 24-ին հայկական եկեղեցիները բացին իրենց դռները Սուրբ Եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ Եւ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, սրահներու մէջ յուշ երեկոներ կազմակերպուեցան:

Դուք այս հարցումները պիտի հարցնէք ձեր մայրերուն ու հայրերուն: Անոնք պիտի պատմեն ձեզի, թէ՛ ինչո՞ւ:

Անոնք պիտի ըսեն ձեզի, որ Ապրիլի 24-ը աշխարհի բոլոր հայերուն համար յիշատակի սուրբ օր է: Այդ օր, բոլոր հայերը մասնաւոր կերպով կը յիշեն, որ 103-տարիներ առաջ 1915-ին, թուրքերը ցեղասպանութիւն գործեցին: Անոնք հայ ժողովուրդը դուրս դրին իր երկրէն, ու քչեցին անապատները՝ անօթի ու ծարաւ մեռելու: Գրաւեցին հայերու տուները, դպրոցները, եկեղեցիներն ու ամբողջ հարստութիւնը:

Ապրիլ 24-ին, բոլոր հայերը կը համախմբուին, կը յիշեն իրենց նահատակները ու կը խոստանան, որ պիտի չմոռնան թուրքին անմարդկային արարքը, անպայման՝ պիտի վերադառնան իրենց երկիրը՝ Պատմական Հայաստան:

Երբ ձեր հայրերն ու մայրերը պատմեն այս բոլորը, դուք ալ պիտի խոստանաք, որ երբ մեծնաք, պիտի պահէք ձեր հայրերուն ու մայրերուն խոստումը, պիտի աշխատիք լաւ հայեր դառնալ, որպէսզի երբ ժամանակը գայ, ըսէք թուրքին, որ դուք չէք մոռցած, կը յիշէք ամեն բան, կը յիշէք գազան թուրքին գործած ցեղասպանութիւնը Եւ արդար հատուցում կը պահանջէք:

Դուք պիտի հարցնէք՝ «Ո՞վ է լաւ հայը»:

Լաւ հայը ան է, որ կը սիրէ իր ոսկեղնիկ մայրենի լեզուն՝ հայերէնը, հայ դպրոցը, հայ եկեղեցին Եւ մեր չքնաղ հայրենիքը՝ Հայաստանը ու ամեն գնով գիտէ տեր կանգնիլ այս անկորնչելի գանձերուն:



ԽԱՍՈՂԵՐ

Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գտնուող տասը տարբերութիւնները:

Կրնա՞ս գտնել կայծակին ճամբան:

Այս սիրուն աղջկան պատկերը կ'ուզե՞ս ներկել:

ԳՈԼԻՄԱՄ ՄԱՅՐԻԿԸ

Գիշեր էր, ձիւն կը տեղար: Ես ու մեծ մայրիկս որուն Գոլիմամ կը կոչէ-ինք, նստած էինք վառարանին դիմաց ու ես կիսաբաց աչքերով, բայց սուր ականջներով կը լսէի մեծ մօրս...

«Չորս տարեկան էի, երբ հայրս, մայրս, եւ երեք քոյրերս սպաննուեցան թուրք խուժանին կողմէ, բարեբախտաբար, մօրաքոյրս զիս Ֆրանսա ուղարկեց, իր տղուն՝ Չաւէնին մօտ: Քսան տարի յետոյ ես ամուսնացայ ֆրանսացի տղու մը հետ, եւ երկու տարեկան աղջկաս հետ, որ քու մայրդ է, Պարսկաստան եկանք, գտնելու համար իմ միակ հօրեղբայրս՝ Յայկը, որ երբ փոքր էի զինք Յակ կը կանչէի եւ ինք խնդալով իր ուժեղ ձեռքով կը սեղմէր այտս, բայց ան ալ մահացաւ...»:

Չկրցաւ շարունակել, ան կու լար: Ոտքի ելաւ եւ դանդաղ քայլերով մօտեցաւ պատուհանին:




- Լուսինէ՛, դեռ ձիւն կը տեղա՞յ,- հարցուց արցունքները սրբելով:
- Այո՛, այո՛, մեծ մայրիկ: Արդէն գետինը քու մազերուդ նման ճեփ-ճերմակ է: Իսկապէս, մեծ մօրս մազերը ձիւնի նման սպիտակ էին, աչքերն ալ լաւ չէին տեսներ, բայց իր ձայնն ու հեքիաթները դեռ թարմ են ու գեղեցիկ:
- Երեք-չորս տարեկանին տեսած էր իր ամբողջ ընտանիքին մահը:
- Գիշերը, քնանալէ առաջ աղօթեցի եւ փորձեցի քնանալ, բայց չկրցայ: Յիշեցի մեծ մօրս խօսքերը:
- Ես թուաբանական խնդիր մը իսկ չեմ կրնար լուծել, երբեմն դժուարութիւն կ'ունենամ ըմբռնելու եւ լուծելու, բայց մեծ մայրս, չորս տարեկանին ամեն ինչ հասկցեր էր, ոչ թէ թուաբանական խնդրի մը դժուարութիւնը, այլ՝ կեանքի դժուարութիւնը իր մորթին վրայ զգացեր է:

Ան իր ծնողքին, քոյրերուն, դրացիներուն, ընկերուհիներուն սպանութիւնը տեսնելով հասկցեր էր, որ այդ բոլորը սուտ չեն, այլ՝ դառն իրականութիւն եւ իսկական պատմութիւն: Ան իր փոքր տարիքին հասկցեր էր, որ այդ անմեղ ժողովուրդի արիւնը թափուած էր, միայն այն պատճառով, որ հայ ծնած էր եւ ուզած էր հայ մնալ, չլքել իր հողը:

Ինչո՞ւ, ինչո՞ւ պետք էր հայը մեռնէր: Անկարելի է մոռնալ: Ամբողջ ուժովս բռնեցաւ վեր բարձրացուցած կը բացազանչեմ:

- Հայը կ'ապրի,
կա՛յ ու կը մնա՛յ:





Այդ ծրագրի յաջողութեան համար անհրաժեշտ էր ամեն բանէ առաջ ջնջել հայ ժողովուրդի առաջնորդ տարրը: 23 Ապրիլի, 1915-ի գիշերը հարիւրաւոր մտաւորականներ ձերբակալուեցան ու բանտերը նետուեցան կամ դատապարտուեցան արքորի:

Ամբողջ Արեւմտեան Հայաստանը ինկաւ Թուրքիոյ հարուածին տակ: Թուրքը քանդեց հայկական դպրոցները, այրեց եկեղեցիները ու ժողովուրդը բռնեց տարագրութեան ճամբան, անցնելով Տէր Չօրի անապատէն, որուն աւազները դարձան գերեզմանները հայ մանուկներուն, երիտասարդներուն եւ ծերերուն:

Հայեր երկաթէ շերտի պէտք ունեին: Այդ շերտի վերցուցին, կռուեցան, դիմադրեցին, սակայն լուռ ու անտարբեր դիտող աշխարհի մը առջեւ անկարելի էր դիմանալ կազմակերպուած եւ զինուած բանակի մը:

Հայը կորսնցուց իր հայրենիքը, առաջնորդները եւ իր ժողովուրդէն մէկ ու կէս միլիոն անձ:

Այս բոլորը պատմական իրողութիւններ են, որոնք արձանագրուած պիտի մնան ոչ միայն պատմութեան էջերուն վրայ, այլ իւրաքանչիւր հայու

սրտին մէջ, այնքան ատեն որ այդ սիրտը կը տրոփէ: Կարելի չէ մոռնալ ցեղասպանութիւնը, բայց մանաւանդ աշխարհի անտարբերութիւնն ու անարդարութիւնը:

Այս բոլորով հանդերձ, հայը վերապրեցաւ որպէս ազգ եւ ժողովուրդ, եւ այս մէկը պատահական չէ, այլ անիկա արդիւնքն է իր կեցուածքին եւ պայքարին 1915-ի դէպքերու ընթացքին: Վանի, Շապին Գարահիսարի, Մուսա լէրան, Ուրֆայի, Մարաշի, Այնթափի եւ Հաճընի ինքնապաշտպանութեան կռիւները լաւագոյն վկաներն են այդ բոլորին:

Թուրքիոյ գործադրած ցեղասպանութեան դիմաց հայ ժողովուրդը ցոյց տուաւ միասնականութիւնը հաւատքի մէջ հաստատ մնալու, եւ հայ մնալու: Այս հաւատքով է, որ Սփիւռքի մէջ առաջին հերթին հայը հիմնեց եկեղեցի եւ դպրոց:

Այսօր, որպէս հայ ժողովուրդ, կտակ մը ունինք մեր նախահայրերէն: Այդ կտակը՝ մեզի տրուած ժառանգը աննելն է:

Հարիւր երեք տարիներ ետք, հայը դատ մը ունի աշխարհի ներկայացնելիք: Անոր դեմ անարդարութիւն գործուած է եւ համայն աշխարհը պէտք է ճանչնայ այդ մէկը:

Այսօր իւրաքանչիւր հայ պատանի եւ երիտասարդ այդ դատի պաշտպանը եւ արդար իրաւունքները պահաջողը պիտի ըլլայ: Հայը պիտի պահէ իր հայկական ինքնութիւնը: Ահա թէ ինչու կարելոր է անոր դաստիարակութիւնը հայ դպրոցին մէջ:

Եկեղեցին եւ դպրոցը մեր հոգեւոր ազգային ամրոցներն են, որ մեզ կը զօրացնեն, դիմադրելու թշնամիի մը, որ չարութեան գործիք է, մանաւանդ գալիք մարտահրաւերներուն դիմաց Արցախի եւ Հայաստանի մէջ:



ALA MEMOIRE DES 1.500.000 ARMENIENS
MASSACRES LORS DU GENOCIDE DE 1915

Photo Radziszsky 9/2011